ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան, Ն. Զարյան 27, հեռ. (+374 11) 518 201, էլ. փոստ՝ arabkir@yerevan.am

№ 25/01-25/25329 «21» 12 2020 թ.

«ՇԻՆՊԼԱՏՖՈՐՄ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
ք. Երևան, Կուրղինյան փող. 23շ.բն.37

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրն միակողմանի (մասնակի) լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ՇԻՆՊԼԱՏՖՈՐՄ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև. 20.04.2020 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/121-1» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույց-տեխնիկական բնութագրով նախատեսված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի կարիքների համար ապրանքներ (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Նշված պայմանագրով ապրանքների մատակարարման վերջնաժամկետ էր սահմանվել՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 21 օրացույցային օր, այսինքն մինչև 10.05.2020թ.:

Սույն պայմանագիրը՝ 5157000 /հինգ միլիոն հարյուր հիսունյոթ հազար/ դրամի փոխարեն կատարվել է 3462000 /երեք միլիոն չորս հարյուր վաթսուներկու հազար/ ՀՀ դրամի չափով, չեն կատարվել 1695000 /մեկ միլիոն վեց հարյուր իննսունհինգ հազար/ ՀՀ դրամի չափով ապրանքների մատակարարումներ, այսինքն պայմանագրով նախատեսված թվով 91 հատ մետաղյա աղբամաններ, որոնց ընդհանուր գումարը կազմում է 1695000 ՀՀ դրամ, չեն մատակարարվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի

21

գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Վերը նշված պայմանագրի 2.1.7 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Գնորդը խախտել է պայմանագրի 2.1.1 կետում նախատեսված ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է նշված պայմանագրերով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ի դեմս Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի /Երևանի քաղաքապետի 16.11.2020թ. թիվ 3576-Ա որոշում/, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվել է Ընկերության հետ կնքված ապրանքների մատակարարման գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Դ. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

Կատարող՝ Գ. Հովհաննիսյան
011 518-151